ՆՈՐ-ԴԱՐ

№ 124 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 29 Յուլիսի **1888** Ուրբաթ 29 Յուլիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 124

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիս՝ 6 ռուբլի, երեք ամիս՝ 3 ռ. 50 կ., ամիսը՝ 1 ռ. 50 կ., հատը՝ 5 կոպէկ։ Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռէկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն. — Լուրեր։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԵՒԱՆԻՑ.—Նորին Վեհափառութեան բարեհաճ տնօրինութեամբ պ. Արիստակէս Յովհաննիսեանցին Գէորգեան Ճեմարանում իբրև ուսուցիչ հրաւիրելու խնդիրը՝ փակուած կարելի է համարել։ Պ. Ա. Յովհաննիսեանցը, ինչպէս արդէն յայտնի է, հրաժարուեց Երևանի Թեմական դպրանոցի տեսուչի պաշտօնից. նրա տեղ, ինչպէս լսում ենք, հրաւիրուած է պ. Ս. Տէր-Գաբրիէլեան, որ Ճեմարանի նախկին սաներիցն է. նա Գերմանիայում ուսել է աստուածաբանութիւնը և Ճեմարանում ուսուցիչ էր։

—

ԲԱԳՈՒԻՑ.—«Նոր-Դար»-ի ընթերցողներին արդէն յայտնել էինք, որ այս տարուանից տեղս արհեստագիտական դպրոց է բացուելու։ Ուսումնարանի շինութեան համար վարձել են Տ. Ջոհրաբեանի տունը, ուր առաջ գտնվում էր տեղիս աղջկերանց գիմնազիօնը։ Դա մի ընդարձակ և յարմար շինութիւն է. ներկայումս դրան պատրաստում և կարգաւորում են։ Ուսումը կ'սկսուի ներկայ Թուականի սեպտեմբերի 1-ից, իսկ աշակերտների ընդունելութիւնը՝ օգոստոսից։ Ուսումնարանի նոր հրաւիրուած տեսուչն արդէն այստեղ է։ Լիայոյս ենք, որ այդ ուսումնարանը կը ծառայէ իւր բուն նպատակին ինչպէս հարկն է և դրա պաշ. ղեկավարները կաշխատեն իրագործել հասարակութեան առ այդ հիմնարկութիւնը տածած յոյսերը։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—Մեր քաղաքում չկայ յաջորդարան, մինչդեռ եկող փոխանորդները, կամ այլ պատուաւոր հոգևոր անձերն իջևանել են այս կամ այն ազգի տանը, որ մեծ անյարմարութիւն է նրանց համար, իսկ ամօթանք՝ 3500 տուն զուտ Հայ հասարակութեանս։ Եթէ այս տարի չէ, գուցէ եկող տարի կը վերջանայ առաջ եկեղեցու շինութիւնը. բարւոք չէր լինիլ, այդ եկեղեցու մի արդիւնքը, այն է՝ ս. Աստուածածնի խորանի մօտ գտնուած մոմի աշխատանքը, յատկացուէր վերոյիշեալ նպատակին, որ այլ ևս մեր սրբազան հայրերը այս թաղից միւս թաղը, տնից տուն չտեղափոխուին և մեծ վարձեր չհատուցանեն։ Մեր ցոյց տուած արդիւնքից տարեկան առ նուազը կը գոյանայ 1500 ռ., որով երկու տարուայ ընթացքում ազատուած կը լինինք այդ կծու յանդիմանութիւնից։

—«Աղքատանոցի» պատուելի հոգաբարձութիւնը մտածէ՞լ է արդեօք երբ և ինչ խնդրել քաղաքից ամառը համար գետին, որպէս զի անցեալ տարիների նման ամբարի վարձ աւելորդ չհատուցանէ։

—

Կ. Պօլսի Թերթերում կարդում ենք. —Վառնայէն կը գրեն մեզ Թէ Պուլկարիոյ Ֆէրտինանդ իշխանն և իւր մայրը Քլէմանդին իշխանուհին անցեալ շաբթու տեղւոյն հայոց եկեղեցին այցելեր են։ Ազգային վարժարանին աշակերտք եկեղեցւոյն դրան առջև դիմաւորեր են իշխանն ու իշխանուհին, որք եկեղեցի մտնելով իրենց համար յատկապէս պատրաստուած և զարդարուած ծածկուած տեղ մը կեցեր են։ Եկեղեցւոյն քահանայն Տ. Ոսկի Հայրը գոհաբանական աղօթք մը կարդացեր և օհներ է Թէ իշխանն և Թէ իշխանուհին, վարժարանին աշակերտներէն մին ևս ֆրանսերէն բանախօսութիւն մը ըրեր է։

Իշխանը մեկնած պահուն գոհունակութիւն յայտներ է։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ.—Յուլիսի 22-ից դէպը անտանելի շոգեր են լինում Քութայիսում և միրձակայ գիւղերում. երէկ Րէօմիւրի ջերմաչափը բարձրացաւ արևի տակը 38 աստիճանի, իսկ ստուերում՝ 27. սրա հետ երևակայեցէք փոշի և խեղդող քամի. եթէ մի քանի օր այսպէս տևեց և առողջապահական յանձնաժողովը ուշադրութիւն չը դարձրեց տեղւոյս անմաքրութեան վրայ, մեզ սպառնում է վարակիչ հիւանդութիւններ, նա մանաւանդ՝ որ Քութայիսի փողոցներն ու գաւիթները ջրվում են միայն երկնառաք ջրով։

—Գինու և ալիւրի գները սովորականից շատ բարձրացան, իսկ օրական միւս մթերքների արժէքը ցածրացաւ, մանաւանդ մրգեղէններինը։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Այս տարի, չը գիտենք ինչ շարժառիթներից դրդուած, տեղիս ռէալական դպրոցի հայ աշակերտներից մի քանիսը Թողել են իրենց ուսումն և դեռ էլի Թողնում են ու պարապ-սարապ ման գալիս փողոցներում։ Դրանց տեսնելով մարդս և ապշում և ցաւում է...տարիների ընթացքում, զանազան նեղութիւնների ենթարկուելով, անդադար կարդալ և կարդալ, իսկ երբ արդէն մի երկու տարի է մնում ուսման ընթացքն աւարտելու, 5—6 դասատներից դուրս գալ, բոլորովին անբացատրելի է։ Հարցրէք դրանցից, Թէ ուսումնարանից ինչու էք դուրս գալիս, ինչի՞ չէք շարունակում ձեր ուսումը և կ'ստանաք հետևեալ միատեսակ պատասխանը,—«Է՜, ի՞նչ կարդանք, որքան կարդացել ենք, այն էլ մեզ բաւական է, աւարտենք էլ խօ գիտնական չե՞նք լինելու»։ Պէտք է նկատել, որ դրանց մեծ մասը հարուստ ծնողների որդիներ են և նիւթական կողմից բոլորովին ապահովուած։

Մենք այդ բոլորը բացատրում ենք նրանով, որ դրանք շատ անհամբեր են և կամենում են օր առաջ կեանքի մէջ մտնել և ոսկեայ գանձեր դիզել։ Միայն այն ժամանակ են մըտածում և ափսոսում իրենց արարքի վրայ, երբ դրանցից շատերը, երկար ժամանակ գործ փնտռելով, ոչ մի տեղ չեն գտնում և ստիպուած են լինում, ձեռները ծալած, փողոցները չափել։ Լինում են և այնպիսիները, որոնք վարձեալ ցանկանում են դըպրոց մտնել և Թերի մնացած ուսումը շարունակել, բայց արդէն ուշ է լինում, այդ նրանց չէ աջողվում։ Մենք այդպիսիներին խորհուրդ կը տանք, համբերութեամբ շարունակել իրենց ուսումը և, եթէ անպատճառ ցանկանում են դուրս գալ, գոնէ Թող առաջ լաւ խորհեն և յետոյ այդ անեն։ Ինչու չը բաւականանալ եղածով և շատ հետևից ընկնել, և այդպիսով երկուսից էլ զրկուել, քանի որ ապագայում պէտք է ողբան կորուստը։

—

Կիրակի, յուլիսի 31-ին պ. Պարոնեանը, մասնակցութեամբ գեղարուեստական խմբի կը ներկայացնէ. I, «Խաչագողի յիշատակարանից» հեղ. Րաֆֆիի, (կենդանի պատկերներով), II «Կըրթ-Կըրթ», վօդ. 1 արարուածով, հեղ. Մաղաթեանի, (ռուսերէն, հայերէն և Թուրքերէն լեզուներով) և III «Արբեցող», վօդ. 1 արարուածով. ներկայացման վերջը կը լինի «պար»։ Սկիզբն է 9 ժամին. տոմսակները կարելի է ստանալ կասսայում։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—Տեղիս եկեղեցական երկսեռ դպրոցների ուսուցչական խումբը կազմ և պատրաստ է։ Ներկայ ուսումնական տարուայ սկզբից կ'սկսուի կանոնաւոր դասաւանդութիւնը, որ գնդեցիկ երևոյթ է։

—Հոգևոր կառավարութեան անդամ Մ. ք. Տէր-Պօղոսեանցը հրաժարուեցաւ իւր պաշտօնից. այժմ նրան փոխանակեց արժ. Խ. ք. Աբգարեանցը։

—Երևանի Թեմական ս. Առաջնորդը հրամայել է, որ տեղիս հոգևոր երկսեռ դպրոցի բոլոր աշակերտներն ունենան միօրինակ (ծննդական) վկայական և առանց դրան չընդունուի ոչ մի աշակերտ։ Այդ կարգադրութիւնը մեզ համար խիստ ծանր է, մանաւանդ ներկայ նիւթական Ճգնաժամի մէջ։ Յայտնի է, որ այդպիսի վկայական ստացողը նախապէս պարտաւոր է վՃարել որոշեալ 5 րուբլին ընդմենն և երկու 80 կոպէկանոց արքունի դրօշմաւոր Թուղթ։ Յայտնի է նոյնպէս, որ այդ դպրոցներում ուսանում են քաղաքիս միջին և աղքատ դասակարգի որդիքը.—աղքատները ձրիավարժ, իսկ մնացածը մասնաւոր Թոշակատու։ Այդ կարգադրութեան հետևանքը շատ պարզ է, որ շատերը կը Թողնեն դպրոցը։ Մեր կարծիքով բարւոք կը լինէր այդ որոշումը բարեփոխուէր այսպէս.—ծննդականի համար վՃարեն ա. կարգ 3 ր., բ. կարգ 2 ր. և գ. կարգ 1 ր., իսկ ձրիավարժները ստանային ձրի։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ.—Մայր Աթոռի շինութիւնները բոլորովին դադարեցրած են. վարպետները, որ մեծ մասամբ Ալէքսանդրապօլից են, չկարողանալով դիմանալ այստեղ շոգերին, արձակուել խնդրեցին, որպէս զի սեպտեմբերին գալով կրկին շարունակեն իրենց գործը։ Շարունակում են միայն սալայրների (քարայատակ, տրոտուար) շինութիւնը։

—Այստեղ եղանակը կոտրուեց. անտանելի շոգերին յաջորդեցին անձրևային և խոնաւ օրեր. Ջերմութիւնը Ր. +46° իջաւ +14° Ր։ Շարունակ տեղացող անձրևներից կալերը ծլում են, որով մեծ վնասներ են պատՃառում գիւղացիներին և ցորենատէրերին, որոնք դեռ չեն կարողացել ամբարել ցորենը։

—

Քաղաքումս անտանելի շոգերը շարունակվում են. ասես երկնքից կրակ լինի Թափվում. ստուերում Րէօմիւրի ջերմաչափը հասնում է 35 աստիՃանի, իսկ արեգակի տակ՝ մինչև 45-ի։

—

ԳՆՈՐԻՍԻՑ ստացանք 26 րուբլի հետևեալ գրութեամբ.—«Մենք՝ Մհց. և Մաթ. Տէր-Գրիգորեան, Ե. Մ. Փարսադանեան, Յ. Դանիէլեանց, Ե. Աթալեան և Ս. Շահվերդեան անցեալները մի ներկայացում տուինք, որից գոյացած 56 րուբլի զուտ արդիւնքից 26 րուբլի ուղարկում ենք խմբագրութեանդ, խընդրելով, որ դրանից 20 րուբլին յանձնէք պատուական «Նոր-Դար»-ում յիշած Ներսէս Արղութեան աղքատ ընտանիքին (գումարը յանձնուած է ըստ պատկանելոյն, խմբ.), իսկ 6 րուբլին՝ յարգելի Րաֆֆիի մահարձանի օգտին (գումարը յանձնուած է ըստ պատկանելոյն. խմբ.)։ Մնացած 30 րուբլին ուղարկել ենք Հայոց Բարեգործական Ընկերութեան Գորիսայ Ճիւղին։ Ս. Շահվերդեան»։

—

ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ.—Անշուշտ լսեցէք, որ կայսր Սուլթանը հաՃեցաւ ընդունել Ամեն. Ցարութիւն սրբազանի հրաժարականը Պօլսոյ պատրիարքութենէ և հաստատել յաթոռ ս. Երուսաղէմի։ Այդ առթիւ յուլիսի 3-ին տեղապահ Եսեմիա սրբազանը հարկաւոր պատարագը մատոյց և երբ կարգը յիշատակութեան եկաւ, հոգեւոյս Եսայի սրբազանի համար հոգեհանգստեան պաշտօն կատարելէ յետոյ յիշատակեց նորընտիր Ամեն. Ցարութիւն Երուսաղէմի պատրիարքի և և Պօլսոյ պատրիարքական տեղապահ Գեր. Սիմէօն սրբազանի անունները։ Կ. Պօլսէն եկած լուրերին նայելով, ս. պատրիարքը պիտի աշխատէ ամսոյս վերջերը այստեղ գալ։

—

Ստացանք «Եւս կամ ուղեցոյց եգական սեռի զգեստուց ձևագիտութեան» պատկերազարդ գրքի երրորդ տետրը՝ 105-րդ երեսից մինչև 120-րդ երեսը։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Մի քանի օր առաջ այստեղ էր Կ. Պօլսեցի գրագէտ պ. Մինաս Չերազ, որ հարցասիրական և Ճանապարհորդական նպատակներ ունէր։ Պարոնը խիստ մանրամասն տեղեկութիւններ էր հաւաքում մեր գործերի դրութեան մասին և լուրջ քննութիւն անում նրանց։ Նրա մասին լուրեր տարածեցին, Թէ եկել է վարդապետանալու։ Բայց այդ սխալ է երևում։ Այժմ իւրաքանչիւր ուղևորի վրայ, որ ամուրի է և այցելում է էջմիածինն, կարելի է ասել այդ....

Առ հասարակ շատ Թոյլ է ռուսահայերի կապերը Թիւրքահայերի հետ, որոնցից վերջինները յիշում են մեզ միայն իրենց մի պատուհաս պատահած միջոցին, երբ փողի կարիք ունին, իսկ շատ քիչ է պատահել, որ հարցասիրական նպատակով աշխատած լինին հետաքրքրուել մեզանով։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Տեղս Թէև կան բազմաթիւ կառապաններ ամեն ազգութիւններից, բայց դրանց մեծ մասը Թուրքերն են կազմում, որոնք յայտնի են անքաղաքավարութեամբ, կոպիտ և լկտի բնաւորութեամբ։ Օր չէ անցնում, որ դրանց անզգուշութեան պատՃառով, մի որ և է դժբախտութիւն չը պատահի։ Նրանք շատ անգամ կառքի վարձը նշանակած տակսայից աւելի են պահանջում, իսկ եթէ չէք տալիս նրանց ուզած գինը, այն ժամանակ փողոցային վերին աստիՃանի անվայել հայհոյանքների կարկուտ են Թափում ձեր գլխին։ Եթէ մարդս անզգուշութեամբ, մոռանալով մի բան է Թողնում կառքի մէջ, էլ յոյսը պէտք է բոլորովին կտրէ նրանից, որովհետև վերադարձնող չէ լինելու, իսկ պահանջել էլ չէ կարող...Պատահել է քանիցս, որ դրանք միայնակ կառք նստող տղամարդկանց կամ կանանց, տանելով քաղաքից դուրս, այնտեղ կողոպտել են, և դեռ գոհ պէտք է լինեն, եթէ այդքան հեշտ էլ պրծնում են։ Գողութիւնների և մարդասպանութիւնների մեծ մասի մէջ դրանք էլ խառն են լինում։ Այդ բոլորը յայտնի է ամենքին, բայց մեր քաղաքային վարչութիւնը շատ Թոյլ է վերաբերվում դէպի դրանց։ Թող սաստիկ հըսկողութիւն լինի, այն ժամանակ կարելի է վերջ տալ այդպիսի դէպքերին և կառապանների կամայականութեանը։

—

Բագուի ոստիկանութիւնը գտել է արծաթ քսան կոպէկանոց պատրաստողների մի խումբ։ Փողի գործարանը եղել է Գորչակովսկայա փողոցում, Տէր-Յովհաննիսեանի տանը, շամախեցի Ստեփան Սարուխանեանի բնակարանում, որտեղ գտել են զնդան, փող կտրելու գործիքը և զանազան նիւթեր՝ արՃիՃ, ցինկ և այլն։ Սարուխանեանը, «Каспій»-ի ասելով, ձերբակալուած է։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—Երևանի կոնսիստորիան տեղիս «Փրկիչ» եկեղեցուց անյայտացած զանազան իրեղէնների և երկսեռ դպրոցների մատակարար անցեալ և ներկայ գործերի մասին քըննիչ է նշանակել մեծ. Մակար Տէր-Սարգսեանին, որ մեծ եռանդով առաջ է տանում իւր պաշտօնը։ Պ. քննիչի անկեղծութիւնը, մանաւանդ քննելի առարկաներին քաջ ծանօթ լինելը մեծ յոյս է տալիս մեզ, որ շուտով կը լուսաբանուին շատ գաղտնիքներ։

—Մեր քաղաքային ազատ գետինները զանազան անձեր ապօրինի կերպով գրաւել են, մինչև անգամ այգուն կից հին գերեզմանոցում կալ են կալսում, բայց ուշադրութիւն դարձնող չկայ։ Քաղաքային այգում էլ է արածում։ Ո՞վ է հարցնողը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՇՎԷԴ-ՆՈՐՎԷԳԻԱ.—Այս երկիրը, որ առանձնացած պառկում է Եւրոպայի հիւսիսային կողմում՝ երեք կողմից ծովերով շրջապատուած, կրկին ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը իւր վրայ դարձրեց վերջերս Վիլհէլմ կայսրի արած այցելութեամբ։ Այդ առթիւ խօսելով այդ երկրի մասին, «Wiener Tagebiatt»-ը ասում է, որ Շվէդիան իւր վարմունքով բոլորովին ապացուցեց, որ նա ամենից աւելի խոյս է տալիս եւրոպական քաղաքականութեանը խառնուելուց։ Գուստավ Ադոլֆի հայրենիքը հեռու է ընդհանուր գործերից և նրա ներկայ վարմունքը զարմանալի հակապատկեր է ներկայացնում նրա անցեալին։ Երբ 1864 թուին պատերազմի միջոցին Դանիան կռվում էր Պրուսիայի և Գերմանիայի միացած բանակի դէմ, Շվէդիան շատ անգամ յօնքերն էր կիտում, բայց տեղից չէր շարժվում։ Այն օրից, սակայն, նա իւր սրտում պահպանել է իւր դժգոհութիւնը Գերմանիայի դէմ։ Ֆրիդրիխ-Վիլհէլմ պրինցի (յետոյ գերմանական Ֆրիդրիխ III կայսր) 1877 թուին Օսկար թագաւորին արած այցելութիւնը չցրուեց այդ դժգոհութիւնը. այժմ Վիլհէլմ II-ը այցելեց Ստոկհոլմ՝ դժգոհութեանը վերջ տալու համար, և յոյս ունի, որ իւր հեռանալուց յետոյ Գերմանիայի և Շվէդիայի մէջ դժգոհութեան նշանն անգամ չի մնայ։

—«All. Zeit.» թերթը նախանձում է Շվէդիային, որ կարող է խաղաղ ապրել՝ առանց եւրոպական խարդաւանքների մասին հոգալու։ Մի կողմ թողնելով իւր փառաւոր անցեալը, որ ունեցել է Գուստավ-Ադոլֆի և Կարլոս XII-ի միջոցին, ներկայ Շվէդիան իւր փառքն ու մեծութիւնը պտրտում է խաղաղ աշխատանքի և քաղաքացիական կեանքի զարգացման մէջ։ Վիլհէլմ կայսրի Օսկար թագաւորին արած այցելութիւնն կարելի է խաղաղական իմաստով բացատրել միայն։ Բեռլինի թերթերն ասում են, որ Եւրոպան լիքն է դիւրավառ տարրերով, բայց անկասկած է, որ այդպիսի տարրեր չկան Ստոկհոլմում։ Հիւսիսային մեծ և փոքր պետութիւնների միութիւնը անկասկած կարող է սառեցնել եւրոպական խաղաղութիւնը վրդովելու ցանկութիւն ունեցողների եռանդը։

—Օսկար թագաւորն անցեալ տարի մտադիր էր այցելելու Ֆինլանդիան և գնտելու Իմատրայի ջրվէժը՝ առանց Պետերբուրգ հանդիպելու։ Բայց յետոյ նա ետ էր կացել այդ մտադրութիւնից՝ մտածելով, որ դա լաւ չէ քաղաքական և թէ քաղաքավարական տեսակէտից, ուստի նա մտադիր է Ֆինլանդիային այցելելու՝ նախապէս հանդիպելով Պետերբուրգ։

ԱՆԳԼԻԱ.—Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ անգլիական կառավարութիւնը մինչև այժմ էլ առաւելապէս զբաղուած է իռլանդական խնդրով և նրան լուծում չտալով՝ ինքն էլ անկարող է լինում իւր նախկին ազդեցիկ դերը խաղալ, «Vossische Zeitung»-ը կարծում է, որ Անգլիան պարտական է մի կերպ վերջ տալ այդ խնդրին, երբ կամենում է, որ կրկին բռնէ իւր արժանի տեղը։ Հենց այդ միտքը յայտնեց լորդ Ռոզբէրին Բոլտոնում կազմուած միտինգում։ Ճառախօսը աշխատում էր ապացուցանել, որ անհրաժեշտ է իռլանդական խնդիրը լուծել Գլադստոնի առաջարկութեան իմաստով, անդելով, թէ Անգլիայի ձայնն, մինչև որ իռլանդական խնդիրը չլուծուի, կշիռ չի ունենայ Եւրոպայում և Իռլանդիան միշտ սպառնալիք կը լինի նրա համար։

—«Daily Telegraph» թերթում ծովակալ Գորբին զետեղել է մի յօդուած, որի մէջ հաշուել է, թէ քանի նաւ է հարկաւոր Ֆրանսիական Տուլոն նաւահանգիստը պաշարելու համար միայն։ Իւր յօդուածի մէջ հետեւեալ եզրակացութեան է գալիս նա. Ներկայումս եղող զրահակիր նաւը կարող է 32 օրուայ ածուխ պաշար առնել միայն, որի կէսը, այսինքն 18 օրը կը գործադրուի ճանապարհին, այնպէս որ զրահակիրը 14, 15 օր միայն կարող է լողալ թշնամու նաւահանգստի առաջ։ «Ուրիշ խօսքով, այդ նշանակում է, որ եթէ մենք Տուլոն զրահակիր ուզենանք ուղարկել, պէտք է լինի մի ուրիշ զրահակիր էլ, որ 14 օրը մի անգամ փոխարինէ նրան։ Եթէ Տուլոնի առաջ կանգնելու լինեն 16 զրահակիրներ, այն ժամանակ միմիայն Տուլոնի համար հարկաւոր կը լինի Միջերկրական ծովի վրայ պահել 32 զրահակիր, մինչդեռ Անգլիան միայն 28 հատ լաւ զրահակիրներ ունի»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թղթէ սիգարներ.—Նիւ-Եօրկի գործարաններից մինն մեծ քանակութեամբ պատրաստում է մի առանձին տեսակ թուղթ, որ նշանակուած է ծխախոտ դառնալու։ Ինչպէս լսվում է, մի քանի «ազնիւ» արդիւնագործողներ այդ թուղթը ծխախոտի վերածելու համար, վեր են առնում ծխելուց մնացած ծխախոտի կտորտանքներ, եռացնում են ջրի մէջ և յետոյ յիշեալ թուղթը թաթախում են նրա մէջ այնքան, որ ծծելով ստանում է ծխախոտի գոյն և հոտ։ Այնուհետև նրան կտրում են կտոր-կտոր և առանձին գործիքի միջոցով դրօշմում են վրան ծխախոտի ջիղերի նման գծեր։ Այդ թուղթը այնքան նմանում է ծխախոտի, որ երկար ժամանակ ծխախոտ գործածողներն անգամ չեն կարողանում որոշել, որ իրենց ծխածը թուղթ է և ոչ մաքուր ծխախոտ։

*** Հռոմից հաղորդում են, որ Անջելօ Ցանկին գտել է Նապոլէօն I-ի բոլոր ինքնակենսագրութիւնը, որ այդ կայսրը ս. Հեղինէի կղզում թելադրում էր իւր գրագրին։

*** «Times»-ի ասելով, խօլերան սարսափելի զոհեր է տանում Բիրմանիայում։

*** Աւստրիայի զանազան տեղերում ձիւն է գալիս։ Այնպիսի ցրտեր են եղել, որ մինչև անգամ մի մարդ է սառել... յուլիսի մէջ։ Միևնոյնն է և Էլզասում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՌԼԻՆ, 28 յուլիսի.—«National Zeit.»-ի ստացած տեղեկութիւններին նայելով, մեծ գոհունակութիւն յայտնուեց Պետերբուրգում կայսրների տեսակցութեան հետեւանքներից։ Կանցլերի կարծիքով, այդ դրական հետեւանքը կայանում է երկու կայսրութիւնների մէջ այնպիսի յարաբերութիւններ հաստատելում, որոնք, քանի կարելի է մտածել, նոր շրջան են բացանում հանգստացման և խաղաղութեան համար, որ ապահովուած լինի առ երկար։

ՎԻԵՆՆԱ.—Սօֆիայից ստացուած մասնաւոր տեղեկութիւններին նայելով, այնտեղ Կ. Պոլսից լուր է ստացուած, որ Աւստրիայի, Իտալիայի և Անգլիայի մէջ շուտով բանակցութիւններ կ'սկսուին բուլղարական խնդրի վերաբերմամբ։ Աւստրիան, ինչպէս լսվում է, պատրաստ է մի քանի կէտերում զիջում անելու, մանաւանդ բուլղարական գահի նոր թեկնածուի անձի վերաբերմամբ։ Սօֆիայի գիտակ շրջաններում հաստատում են, որ եթէ Կոբուրգեան պրինցը պաշտպանութիւն չգտնէ ոչ մի պետութեան կողմից, ինքը Բուլղարիան էլ չի ընդիմանալ նոր իշխան նշանակուելուն։

ՊԱՐԻԶ.—Կոմունար Եդի (Eydes) թաղումը սկսուեց կատարեալ հանգիստ դրութեամբ։ Բայց Վոլտէրի ճեմելիքի անկեանը, ուղեկիցների ամբոխի մէջ պարզեցին կարմիր դրօշակներ. այն ժամանակ հետեւակ զօրքը յարձակուեց ամբոխի վրայ և նրա ձեռքից խլեց այդ դրօշակները։ Ամենաբուռն միջոցներ են ձեռք առնուած կարգը պահպանելու համար,—ոստիկաններին պատուէր է տրուած զէնք գործածելու, եթէ նրանց կեանքը վտանգի ենթարկուի. ոստիկաններին օգնութեան համար պատրաստուած են զօրքեր, որոնք հարկաւոր միջոցին կը յարձակուին ամբոխի վրայ։ Բանուորների բօրսան փակուած է և զօրքերով է պաշարուած։

ՎԻԵՆՆԱ.—Այստեղի քաղաքագէտները համոզուած են, որ Կոբուրգեան պրինցի կառավարութեան վերջը մօտենում է և թէ Բուլղարիան կամաւորապէս կը հեռանայ Բուլղարիայից։ Գերմանիան դիպլոմատիկական գործառնութիւնները սկսեց այդ ուղղութեամբ. Աւստրիան համաձայնեցաւ Կոբուրգեան պրինցի կամաւորապէս հեռանալուն. սպասում են և Իտալիայի համաձայնութեան։ Լրագիրների ասելով, Ստամբուլովի և պրինց Ֆերդինանդի դրութիւնը բոլորովին անտանելի է դարձել երկրում շատացող աւազակութիւնների պատճառով. Լրագիրների թշնամաբար վերաբերուելը դէպի Ռուսիան, արձագանք չէ գտնում ժողովրդի կողմից։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

CAPSULES DE MATICO
De GRIMAULT & Ce, Pnarmaciens
A PARIS
PERMIS EN RUSSIE
ՄԱՏԻԿՕԻ ԿԱՊՍՕԼՆԵՐ
Պարիզի Գրիմօ և ընկ.
դեղավաճառների.
Ռուսաստանում ընդունուած.



Այս կապսօլները հոմանի (gonorrhée) դէմ գործածուած դեղօրէից ամենից ազդուն է, և բացի սրանից այն առաւելութիւնն էլ ունի, հեղուկ կոպահիւով լցուած կապսօլներում։ Ծախվում է Պաշիգ Վ. վիէն փողոց № 8 և գլխաւոր դեղատներում.

T

ա (M) 19—1.

ՄՈԴՈՔԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ուսուցիչ երգեցողութեան և առարկաներ դաս տալու համար, շաբաթական 18—24 դաս. ռոճիկն է 400 րուբլի և ամեն ինչ պատրաստ—բնակարան, վառելիք և այլն։ Դիմել Ուսումնարանի հոգաբարձու պ. Յովհաննէս Դանջումեանցին։

5—1

8.

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՋՈՒՐ,

Սենեակի ապականուած օդը թարմացնելու և օզոն աւելացնելու միջոց։

Դեղատներում ծախվում է փոքր ի շատէ նշանաւոր առեւտրականների մօտ, իսկ Մոսկվայում—

Ր. ԿԵՕԼԵՐԻ և ընկ. մօտ, Նիկոլսկայա փողոցի վրայ։

(M. 46, 221) 3—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,

որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը և վարել է ուսուցչութեան պաշտօն Հայոց ուսումնարաններում, ցանկանում է դասեր ունենալ Հայ ուսումնարաններում ձեռնտու պայմաններով։

Պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

10—10

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւարտել է իւր ուսումը Թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտում և մի քանի տարի վարել է ուսուցչական պաշտօն Հայոց ծխական-եկեղեցական դպրոցներում, ցանկանում է դասեր ունենալ նոյնպիսի դպրոցներում։ Կարող է դասախօսել ռուսաց լեզու, թուաբանութիւն, ռուսաց պատմութիւն, աշխարհագրութիւն, նկարչութիւն ու վայելչագրութիւն։

Պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան.

6—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԲՆԱԿԱՐԱՆ

որ բաղկացած լինի 6 կամ աւելի սենեակներից և գտնուի Գոլովինսկի պրոսպէկտի, Լօրիս-Մելիքեան և նրանց կից փողոցների վրայ։ Պայմանները յայտնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ՂՈՒԲԱՅԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր է մի ուսուցիչ ռուսաց և նոյն լեզուով աւանդելիք առարկաների համար։ Պայմանների մասին կարելի է դիմել Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի խմբագրատանը պ. Խաչատուր Փանեանցին, իսկ Ղուբա՝ տեղիս Հայոց ուսումնարանի հոգաբարձութեան իրենց պայմաններով։

5—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է մի վարժուհի, որ կարողանայ Հայոց եկեղեցական-ծխական օրիորդական դպրոցում ռուսաց լեզու դասախօսել։ Հասցէն իմանալ «Նոր-Դար»-ի խմբագրատանը.

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ուզում է բնակարան ունենալ իւր բոլոր պիտոյքներով. նոյնպէս ճաշ. կարելի է և առանց ճաշի։ Բնակարանը պէտք է լինի Պրոսպէկտի մօտիկ փողոցներում։ Հասցէն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գեղագրութիւն։ Ուսումը ըսկսուելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 5-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլոլակում, Լաբորատորնայա փողոցի վրայ, № 11։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

Օգոստոսի 20-ից կուրսերը փոխադրուելու են Ալէքսանդր Պրիդոնովի տունը, № 9, Սերգիեվսկայա և Նազարովսկայա փողոցների անկեանը (դեղատան դիմաց)։

.0—1 (ր. 2)

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го Іюля 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Чигахова.